ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀԱ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 12 հունիսի 2019թ., ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Ավետիսյան

Անդամներ՝ Թ. Միրզոյան

Ա. Թորոսյան

Տ. Մանուկյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Վ. Վանեսյան

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով

1. Գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշում կայացնելու մասին

ա. Հանձնաժողովի նիստը իրավազոր ճանաչելու և օրակարգը հաստատելու մասին.

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 26-րդ կետի 2-րդ ենթակետի՝ հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Հանձնաժողովը որոշեց նիստը իրավազոր ճանաչել և հաստատել օրակարգը.

Որոշումը ընդունվել է՝ կողմ 4, դեմ 0:

Հիմք ընդունելով «ՀԱ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը.

Հանձնաժողովը որոշեց՝

բ. 1-ին չափաբաժնով 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «Սերգեյ Հովհաննիսյան Արարատի» Ա/Ձ–ի հայտը մերժել, հիմք ընդունելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի դրույթները: Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարություն 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45 կետի՝ առաջարկել մասնակցին ներկայացնել տեղեկանք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների մարված լինելու մասին, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չներառելու համար:

գ. 1-ին չափաբաժնով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Տաշիր-կար» ՍՊԸ-ին առաջարկել երեք աշխատանքային օրում ներկայացնել հրավերով և հայտով սահմանված որակավորման հատկանիշները հիմնավորող փաստաթղթերը:

2-րդ չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Կոտայքկոշ» ԲԲԸ-ին հայտարարել ընտրված մասնակից և առաջարկել կնքել Կիսաճտքավոր ամառային կոշիկների մատակարարման պայմանագիր:

դ. Գնումների մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն 2-րդ չափաբաժնով անգործության ժամկետը հինգ օրացույցային օր է, ժամկետի ավարտը հայտարարել հայտարարության հրապարակումից հաշվված հինգերորդ օրը՝ 17.06.2019թ.: Անգործության ժամկետի ավարտից հետո մասնակցի հետ կկնքվի Կիսաճտքավոր ամառային կոշիկների մատակարարման պայմանագիր:

ե. Հաստատել և հրապարակել «ՀԱ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ձեվով գնում կատարելու ընթացակարգի 2-րդ չափաբաժնով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

Որոշումը ընդունվել է՝ կողմ 4, դեմ 0:

2. Գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել

«ՀԱ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ձևով մրցույթի 1-ին չափաբաժնով հայտերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2019թ. հունիսի 18-ին, ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____

Անդամներ՝ _____

_____

_____

Քարտուղար՝ _____